

Ի՞նչ մէկ խողովակ մը՝ որուն երկայնութեան չորսին իրեքը լից ջրով, բերանը գոցէ ու բամբակով պատէ խողովակը՝ ու այն պատած բամբակը թրջէ եթերով. կամ լաւ ևս՝ խողովակը թաթիսէ եթերով լցուած ամանին մէջ ու հանէ կախէ օդոյն մէջ՝ ու ճօճէ կամ պտրտացու։ Վորոշիքն որ կ'ելլէ բամբակէն՝ խողովակին մէջի ջերմութիւնն առնելով՝ ջուրը կը սառնի հինգ վայրկեանի մէջ։ Եթէ ջերմաչափ մը կապած ըլլաս խողովակին քով, ջերմաչափին գունտին ալ բամբակով պատած ու նոյնպէս եթերին մէջ թաթիսած, կը ցուցնէ գորշիքէն պատճառած ցրտութեան աւտիճանը։ Շօճելուն և կամ պտրտցնելուն վախճանն է՝ որ խողովակին շրջապատ օդը փոխուելով՝ շոգիացումը դիւրանայ։

Երբ սկզբամբ՝ կրնայ մէկը ամառուան մէջ սառ շինել բաց օդոյ մէջ ջուրը տարածելով, բայց պէտք է որ օդը շատ պարզ ըլլայ։ Վանի մը կարգ եղէ՞ք վրայէ վրայ շարէ, և այն եղէ՞քներուն վրայ լայն տափակ տաշտեր զետեղէ, և ասոնց մէջ ջուր լեցու՝ ըստ կարի քիչ խորութեամբ. գիշերուան մէջ ջրոյն երեսը կը պաղի անարգել գոլովիք հանելով, և այնչափ կը ցրտէ որ ջրոյն երեսը կը սառնի։ Պենկալայի մէջ ասիկայ կատարելապէս կը յաջողի։ Վաղղիայ ալ, Վարիզու մօտ, աս բանս մօտեւ փորձեցին բայց շահաւոր չէ եղած, վասն զի ըրած աշխատանքին և ծախքին ելած սառոյցը չէ համեմատեր։

Բայց քան զամենը սաստիկ սառեցնելու միջոցն է հեղուկ ածխային թրթուրին գործածութիւնը, որ ինչուան սնդիկն ալ կը սառեցնէ։ Թիւային թրթուրն հեղուկ վիճակ դարձնելու համար պէտք է տալ 36 մթնոլորտի ճնշումն. ասոր գոլովիքը ալքուլի կամ գինոյ ոգիքով ջերմաչափին գունտին վրայ շտկել տալով՝ ինչուան — 90° կ'իջեցնէ ցրտութիւնը։ Բայց ասոր գործածութիւնը սաստիկ ճնշմանը պատճառաւ վտանգաւոր է. թէպէտ և փորձերը շատ զուարճալի ու հետաքրքրական են։

Խօսքերնիս չմոռցուցած՝ դնենք հոս պաղպաղակ շինելու հիմակուան աւելի գործածական եղած ամենապարզ գործիքի մը ստորագրութիւնը։ Երկա 4 համակերպոն մետաղէ գլաններէ կը ձևանայ. մէջտեղի գլանին մէջ կը դրուի սառեցնելի ջուրը կամ օշարակը, անոր ետեւինին մէջ ցրտաբեր խառնուրդը, երրորդը ջրով լեցուն է, իսկ չորրորդին մէջ, որ է արտաքինը, ջերմութեան քիչ հաղորդիչ մարմին մը դրուած կ'ըլլայ, ինչպէս է բամբակը, որպէս զի արտաքին ջերմութիւնը ներս չթափանցէ։ Երբ համար գործածուած ցրտաբեր խառնուրդն է սոսայի ծծմբուտին քլորաջրային թթուի՝ մէջ լուծումը։ Ենանկ որ 6 հազարակրամ սոսայի ծծմբուտն ու 5 հազարակրամ քլորաջրային թթուն բաւական է ժամուան մը մէջ 5, 6 հազարակրամ սառ հանելու։

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ռոզոյի²։

Տնէն Ռոզոյի շինել գիտնալը շատ պարագաներու մէջ կրնայ օգնել տնտեսական խնայութեան, անոր համար հոստեղս համառօտ մը յիշենք անոր զխաւոր տեսակները իրենց հարկաւոր գիտելիքներովը։

Ընդհանուր հարցիչ հարցիչն է։ — Ռոզոյի շինելու համար պէտք է նախ թրթուրը դնել զկեղևը կամ զնիւթը որուն որ ռոզոյին կ'ուզես հանել՝ այս կերպով. թուրինջը, նարինջը, կիտրոնը, պերկամիթը, և այլն, որուն որ ռոզոյին կ'ուզես շինել, սուր դանակով բարակ մը կը կեղևես ուղած չափովը, ու հողէ տաշտի մը մէջ կը ձգես, որուն մէջ առաջուց լեցուցած պիտի ըլլաս բարկ օդին

1 Գ.լ. Acide chloridrique.

2 Գ.լ. Rossolis. Տճ. Անգլիէնէ։

կիսով ջրախառն . կեղևելը լմննալուն լեցու տամէճանայի մը մէջ ու բերանը խիցով աղէ մը Կոյէ . այսպէս պէտք է թողուս վեց շաբաթ . այս միջոցին մէջ երբեմն պէտք է ցնցել տամէճանան :

Եւ վեց շաբաթէն ցքահանէ , և սահէ :
 Թիւրջ Կաթիւ Կաթիւ . — Խակ հա-
 մեմիչ հնտեղէնները , ինչպէս են անի-
 սոնը , շինի անիսոնը , սամիթը , մե-
 խակը , և այլն , զասոնք նախ ծեծէ ,
 և ետքը ջրախառն օղիով ինչպէս որ վե-
 ըր ըսինք պիտ տամէճանաներու մէջ ին-
 չուան վեց շաբաթ , միշտ երբեմն ցնցե-
 լով զտամէճանաները , անկէ ետե կը
 ցքահանես ու կը սահես :

Թիւրջ Կաթիւ Կաթիւ . — Երեսուց ալ
 համեմիչ ծառի կեղևները , զոր օրինակ
 կինամոմոնը ծեծէ , մէկ երկու կաթիլ
 ջուր վրան կաթեցրնելով որ աւելի բա-
 րակ մասունքը չցրուին . և ետքը ըրէ
 վերի ըսածնուս պէս :

Եւ ծառի Կաթիւ Կաթիւ . — Օ մու-
 ուր , հալուէն , ստորաքսը , ևն , որոնք
 էլիքսիրին գլխաւոր մասունքն են , քիչ
 չափով կը գործածուին քանի մը ըմպե-
 լիքներու մէջ : Երեսուց կը լուծուին բարկ
 ժուղ մէջ . և քիչ քանակ պէտք է գոր-
 ծածել որ ըմպելիքը չլեղունայ :

Եւս նիւթերը ցքահանած պատ-
 րաստ պէտք է սահել այլ և այլ տամէ-
 ճանաներու մէջ անուսնին վրանին նշա-
 նած , որպէս զի ուղած ժամանակդ ա-
 սոնցմով ոռոգողի շինես : Օ այս ալ պէտք
 է գիտել որ ազնիւ ոռոգողի շինելու հա-
 մար ցքահանած համեմիչ նիւթերը
 ցքահանելէն վեց ամիս ետքը պէտք է
 շինել ոռոգողին : Խակ թէ որ չուզես սպա-
 սել վեց ամիս , պէտք է որ քանի մը օր
 շատ անգամ ցնցես տամէճանան , որ-
 պէս զի դիւրանայ զանգուսնը :

Կը շարունակուի :

1 ՏՃ. Ուէլէնէ :

2 ՏՃ. Գաթիւ Կաթիւ :

3 ՏՃ. Ի-ք :

4 ՏՃ. Գաթիւ Կաթիւ :

Բարիգու մէջ գործածուած կերակրեղէնի չափը :

Բարիգու մէջ ամէն տարի սպա-
 ուում հացն է 179,987,791 քիլոկրամ ,
 65,000,000 քիլ . միս , 10,814,399 քիլ .
 խոզի միս , 10,265,103 քիլ . հաւեղէն
 և որսի միս , 13,444,850 քիլ . տեսակ
 տեսակ ձկունք , 10,198,239 քիլ . կա-
 րագ , 5,104,182 քիլ . պանիր , 8,700,000
 քիլ . հաւկիթ , 5,006,770 քիլ . խմո-
 րեղէն , 3,993,083 քիլ . աննդարար խմոր ,
 բրինձ , և այլն . 7,500,000 քիլ . շաքար ,
 1,518,480 քիլ . շաքարեղէն , 246,000
 քիլ . մեղր , 3,000,000 քիլ . խահուէ ,
 1,000,000 քիլ . չիբուլ , 207,000 քիլ .
 657 քիլ . պտղեղէն , 2,082,000 քիլ .
 նարինջ և լեմոն , 3,952,000 քիլ . չոր
 պտուղ , 10,400 քիլ . անանաս , 134,925,
 391 քիլ . խոտեղէն և բանջար , 1,325,
 000 քիլ . չոր խոտեղէնք , 25,750 քիլ .
 թարթուք , 597,815 քիլ . աղ , 270,
 000 քիլ . մանանեխ , 107,500 քիլ . քա-
 ցախի մէջ սահուած վարունգ և սոխ ,
 135,492 պղպեղ , և այլն . 260,156
 քիլ . խորոված սոխ և բանջարեղէնք ,
 1,105,925 քիլ . կերակրոյ համար գոր-
 ծածուած ալիւր , 3000 քիլ . վանիլիա
 7,500,000 քիլ . սառ : Բաց ասոնցմէ ,
 Բարիգու մէջ տարուէ տարի գործա-
 ծուած ծխախոտն է 1,604,601 քիլ :
 Երեսուց ամենուն գումարէն կ'երևնայ
 թէ միայն Բարիգու մէջ ամէն տարի
 գործածուած կերակրեղէններու սպա-
 ուումը 732,105,796 քիլ . կը հասնի :

Բնակելեաց նկատմամբ ալ Բարիգու
 մէջ տարուէ տարի 119,300,000 լիտր
 գինի կը խմուի , 14,000,500 լիտր գա-
 րեջուր , 2,272,000 լիտր ցքի , 12,729,
 700 լիտր ալքուլ , 109,291,086 լիտր
 կաթ , 344,186 լիտր . օղիի մէջ պա-
 հուած պտուղ . 620,236 լիտր անոյշ
 ըմպելիք . 2,007,300 լիտր եղ , 2,043,
 800 լիտր քացախ . 100,000 լիտր նա-
 ընջի ծաղկի ջուր . 3,218,497,000 լիտր
 բնական ջուր : Երեսուց ալ ամենուն բո-
 վանդակուածին է 3,402,474,738 լիտր :